ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱԻԼՅԱՆ

ԱԲԽԱԶԻԱՅԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (1921 – 1931թթ.)

Այսրկովկասում խորհրդային կարգերի հաստատման նախօրեին աբխազ հասարակությունը ազգային բազմակուտակ հարցերի լուծումը տեսնում էր Աբխազիայի կարգավիճակի բարձրացման մեջ: Չնայած բազմաթիվ փորձերին 1918-1920թթ. ինքնիշխանության գաղափարն իրականացնել չէր հաջողվել, որը Աբխազիայի կարգավիճակի շուրջը 1920-ական թվականներին հարուցեց նոր հակամարտություն:

Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակի ուժերով 1921թ. փետրվար-մարտին տեղի ունեցավ Վրաստանի խորհրդայնացումը: Ինչպես գրում է վրաց պատմաբան Դևի Ստուրուան, «1921թ. փետրվարին Վրաստանի պետականությունը ձևականորեն չէր վերացել, այլ տեղի էր ունեցել հասարակական-քաղաքական կարգերի ուժային փոփոխում, Վրաստանի...բոլշևիզացում: Այս գործընթացների լրջախոհ վերլուծումից ծնվեց «իրական զավթում» տերմինը»[1]:

Կարմիր բանակը, աբխազական «Կիալազ»[2] պարտիզանական ջոկատների հետ համատեղ, 1921թ. փետրվարի 19-ից մինչև մարտի 8-ը գրավեց ամբողջ Աբխազիան: Վրաստանում խորհրդային իշխանության հաստատման նախօրեին, վրաց և աբխազ կոմունիստ առաջնորդները Մոսկվայում նախապես պայմանավորվեցին, որ «Սուխումի կուսակցական կազմակերպությունը պետք է մտնի վրացականի մեջ, իսկ Աբխազիան՝ ինքնավարության սկզբունքով մտնի Վրացական ԽՍՀ կազմ»[3]: Մարտի 6-ին ձևավորվեց Աբխազիայի Հեղկոմի հետևյալ կազմը. Ն.Լակոբա, Ն.Ակիրտսվա, Պ.Ագնիաշվիլի: Հեղկոմի նախագահ ընտրվեց Եփրեմ Էշբան, որը 1918թ. գարնանը արդեն գլխավորում էր Սուխումի Հեղկոմը: Բնորոշ է, որ խորհրդայնացման առաջին իսկ օրերից մինչև 1921թ. մարտի վերջերը Հեղկոմի պաշտոնական փաստաթղթերում ոչինչ չի ասված Վրաստանի և Աբխազիայի հարաբերությունների վերաբերյալ: Բավարարվում էին ընդհանուր կարգախոսներով, ինչպես՝ «Կեցցե եղբայրական միությունը Վրաստանի և Աբխազիայի աշխատավորների

միջև»[4]: Մոսկվայում ունենալով նախնական պայմանավորվածություններ. Վրացիեղկոմի անդամները համոզված էին, որ Վրաստանի ամբողջականությանը սպառնալիք չկա և կոչ հրապարակեցին, թե «Աջարիայի, Աբխազիայի և Հարավային Օսիայի եղբայր ժողովուրդները ինքնուրույն են որոշում իրենց ճակատագիրը»[5]: Կարգախոսային բնույթ է կրում Վրացիեղկոմի դիմումը Աբխազիայի Հեղկոմին, որտեղ մասնավորապես ասված է, «որ բոլոր փոքր ժողովուրդները հնարավորություն են ստանում ապրելու ըստ իրենց բնորոշ առանձնահատկությունների»[6]: Դիմումի մեջ Աբխազիայի և Վրաստանի հարաբերությունների վերաբերյալ որևէ առաջարկություններ բացակայությունը վկայում է բանակցությունների անդրկուլիսյան բնույթի մասին: Միաժամանակ Վրացիեղկոմի մարտի 8-ի «Վրաստանի ԽՍՀ կառավարման համակարգի մասին» որոշման մեջ ասված է, որ «Նահանգային հեղկոմները պետք է լինեն երեքը. Թիֆլիսի, Քութայիսի, Բաթումի և մեկ շրջանային՝ Սուխումի կամ Աբխազիայի»[7]: Սակայն հետագա իրադարձությունները զարգացան ոչ նախնական ծրագրի համաձայն:

1921թ. մարտի կառաջին կեսին տեղի ունեցավ Աբխազիայի պատասխանատու աշխատողների երկու խորհրդակցություն, որտեղ որոշվեց հռչակել Աբխազիայի ինքնուրույն հանրապետություն, իսկ կուսակցական կազմակերպությունը կոչել Աբխազիայի Կոմունիստական կուսակցություն[8]: Մարտի 26-ին Աբխազիայի Հեղկոմի անդամները Լենինին և Ստալինին հեռագիր հղեցին, որտեղ դնում էին Աբխազիայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հռչակման և այն ՌՍՖՍՀ-ի կազմում ընդգրկելու հարցը: Որոշումը հիմնավորվում էր «իր ճակատագիրը անմիջականորեն Խորհրդային Ռուսաստանի հետ կապելու» աբխազ ժողովրդի զանգվածային ցանկությամբ և «Աբխազիայի ինքնուրույնության հռչակումով Կարմիր բանակի պայքարի ազատագրական բնույթն ամրապնդելու ձգտումով՝ ինչպես Աբխազիայի աշխատավոր զանգվածների գիտակցության, այնպես էլ արտասահմանի հասարակական կարծիքի մեջ»[9]: Այս դիմումը դարձավ աբխազ բոլշևիկների նախորդ հակամենշևիկյան քարոզչության տրամաբանական հետևանք, որի հիմնական դրույթներից էր Խորհրդային Ռուսաստանին միավորվելու անհրաժեշտությունը, ինչը նշանակում էր նաև խորհրդային կարգերի հաստատում:

Խորհրդայնացումից հետո վերադառնալով վտարանդիությունից, Ն.Լաշբան ստիպված էր այս տրամադրությունները նկատի առնել: «...Կարծում էինք, - գրում էր նա, - որ Աբխազիան գոյություն կունենա որպես Խորհրդային Վրաստանի անբաժանելի մասը, սակայն երբ մենք այստեղ եկանք և պարզեցինք, թե ինչպիսի մթնոլորտ ենք ընկել, մենք ստիպված էինք ընդունել Աբխազիայի անկախության տարբերակը» և «...մենք միաձայն կանգ առանք այն բանի վրա, որ ազգային պառակտության վերացման համար անհրաժեշտ է, թեպետ և ժամանակավոր՝

մինչև Խորհուրդների համագումարը, հռչակել Աբխազիայի անկախություն»[10]: Աբխազ բոլշևիկների 1921թ. ռազմավարությունը հուշվի էր առնում 1918թ. իրենց կողմից թույլ տված լուրջ վրիպումները, երբ Աբխազիայում ժամանակավոր հաստատվեցին խորհրդային կարգեր, սակայն առանց նրա պետականության վերականգնման, որին և ձգտում էին աբխազական ժողովրդի լայն շրջանակները: Նկատի ունենալով քաղաքական ինքնուրույնության համար 1918-1920 թթ. աբխազների պայքարը, Աբխազիայի բոլշևիկները խորհրդային կարգերի հաստատումից հետո առաջ քաշեցին ինքնուրույն պետականության գաղափարը:

Վրաց և աբխազ բոլշևիկների միջև ծագած տարակարծությունները վերացնելու նպատակով միջնորդի դերը ստանձնեց ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի քարտուղար Գ.Օրջոնիկիձեն: 1921թ. մարտի 27-ին Ե.Էշբանի նրա հետ ունեցած զրույցի ընթացքում Հեղկոմի անունից առաջարկեց վավերացնել Աբխազիայի հռչակումը որպես ինքնուրույն հանրապետություն ՌՍՖՍՀ անմիջական կազմում[11]: Ե.Էշբան Հեղկոմի դիրքորոշումը հիմնավորում էր այն բանով, որ աբխազների մոտ ձգտումը դեպի ազգային ինքնորոշում հարուցեց մենշևիկների քաղաքականությունը: Մեկ այլ առիթով այս գնահատականը հաստատում է Օրջոնիկիձեն, չթաքցնելով, որ. «Մենշևիկների ազգայնական քաղաքականությունը ծնեց կտրուկ հակավրացական տրամադրություններ Աբխազիայի, Աջարիայի և Հարավային Օսիայի բնակչության մեջ»[12]: Օրջոնիկիձեն, զարմանք հայտնելով, որ «աբխազ ընկերները» կողմից հարցը առաջին անգամ նման մեկնաբանման էր արժանանում, այնուամենայնիվ համաձայնվեց հռչակել Աբխազիան ինքնուրույն հանրապետություն: Միաժամանակ նա խորհուրդ տվեց շրջանցել Աբխազիայի դաշնության հարցը թե Ռուսաստանի, թե Վրաստանի հետ, մինչև այդ հարցի վերաբերյալ ՌԿ(բ)Կ Կենտկոմի վճիռը[13]: Զրույցի վերջում նրանք համաձայնության եկան հանդիպել Բաթումում մարտի 28-ին: Նշված օրը տեղի ունեցավ Կովկասյան բյուրոյի, Վրաստանի կոմկուսի կենտկոմի և Աբխազիայի հեղկոմի ներկայացուցիչների համատեղ խորհրդակցությունը, որը վարում էր Գ.Օրջոնիկիձեն: Օրակարգում մեկ հարց էր. «Խորհրդային իշխանության և Աբխազիայում Կոմկուսի կառուցվածքի մասին»: Երկար վիճաբանությունից հետո չհաջողվեց ստանալ Վրաստանի կազմ ընդգրկվելու համար Աբխազիայի ներկայացուցիչներից որևէ համաձայնություն: Մարտի 29-ին խորհրդակցությունը վճիռ կայացրեց. «Մինչև Աբխազիայի Խորհուրդների համագումարը ՌՍՖՍՀ կամ ՎԽՍՀ հետ Խորհրդային Աբխազիայի դաշնության հարցը մնում է բաց և Աբխազիան հայտարարվում է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն»[14]: Աբխազական կուսկազմակերպությունը ժամանակավոր ստացավ կարգավիճակ՝ ՌԿ(բ)Կ Կազմբյուրո և ենթարկվեց անմիջականորեն Կովբյուրոյին: Ինչպես կարծում են վրաց հետազոտողներից ո-

մանք (Մ.Գ. Դ-ափրինդաշվիլի, Գ.Գ.Գեորգաձե և այլք), «Մարտի 29-ի Բաթումի խորհրդակցությունը փաստացի ստիպված էր ճանաչել Խորհրդային Աբխազիայի անկախությունը հանգամանքների ճնշման ներքո»[15]: Այս առիթով կարևոր վկայություն է թողել Նեստոր Լակոբան, Վրաստանի կոմկուսի 4-րդ համագումարի ամբիոնից վերհիշելով այդ դեպքերը. «Աբխազիայի անկախության հարցը ծագում է 1921թ. և խորհրդայնացումից անմիջապես հետո առաջ է քաշվում իմ և ընկ. Էշբայի կողմից: Բաթումում մենք, ընկ. ընկ. Սերգոն (Գ.Կ.Օրջոնիկիձեի կուսակցական կեղծանունը – հեղ.) և Էշիավան ապացուցում էինք, որ նման անկախությունը ներկա պահին անհրաժեշտ է Աբխազիայում իրական Խորհրդային իշխանություն ստեղծելու նպատակով, սակայն անհրաժեշտ է որպես ցուցանակ»[16]: Ուրեմն Աբխազիայի ներկայացուցիչների հիմնական փաստարկն այն էր, որ Վրաստանից անկախության ճանաչումը համբավ կբերի նոր իշխանություններին աբխազ ժողովրդի շրջանակներում: 1921թ. կոմունիստական առաջնորդները հմուտ կերպով օգտագործեցին «աբիսազական խաղաքարտը»: Ստալինը, որպես կովկասյան գործերի պատասխանատու և ազգությունների ժողկոմ, թույլատրեց Աբխազիայի «անկախության» հռչակումը՝ դրանով շահելով աբխազների համակրանքը: Եթե 1918թ. աբխազները մերժում էին Խորհրդային իշխանությունը, ապա 1921թ. բոլշևիկների ձեռքից ստանալով «անկախություն»՝ աբխազների մեծամասնության համար նոր իշխանության և անկախության պաշտպանումը ընկալվեց հավասարազոր: Համապատասխանորեն խորհրդային կարգերի հակառակորդները ընկալվում էին որպես աբիսազ ժողովրդի թշնամիներ, ինչը արտահայտվեց նաև Վրաստանում 1924թ. հակաբոլշևիկյան ապստամբության ճնշմանը աբխազների գործուն մասնակցությամբ: Ոչ լիարժեք անկախության հռչակումով բոլշևիկները ցանկություն ունեին ստեղծել ավելի լայն իրավունքների տրամադրման պատրանք, քան Աբխազիան ուներ ժողովրդավարական Վրաստանի կազմում 1918-1921թթ. սկիզբին: Այսպիսով Խորհրդային Ռուսաստանը աբխազների պատկերացմամբ դարձավ սիզատություն և անկախություն արտոնող երկիր, իսկ Վրաստանը ընկալվում էր որպես Աբխազիայի անկախության հակառակորդ:

«Անկախության» հռչակումը բացատրվում էր նաև խորհրդային իշխանության արտաքին քաղաքական նպատակներով: Պարտություն կրելով պատերազմում Լեհաստանի դեմ, ինչը նշանակում էր «համաշխարհային պրոլետարական հեղափոխության» ծրագրերի ձախողում Արևմուտքում, Խորհրդային Ռուսաստանի առաջնորդները հայացքն ուղղեցին դեպի Արևելք, միաժամանակ նպատակ ունենալով տեղի ժողովուրդներին համոզել, թե ինչպես է խորհրդային իշխանությունը հոգում փոքրաթիվ ժողովուրդների կարիքները: Այդ փուլում Լենինը պարբերաբար հիշեցնում էր, որ «...լսվ է ազգային փոքրամասնությունների

նկատմամբ չափազանցել զիջողականությունում և խստիկությունում, քան չչափազանցել»[17]: Լենինը ոչ պակաս նախազգուշական էր Վրաստանի նկատմամբ: «...Վրաց ազգի նկատմամբ մենք ունենք տիպիկ օրինակ, երբ անհրաժեշտ է կրկնակի զգուշավորություն, կանխողականություն և զիջողականություն մեր կողմից»[18]. - հիշեցնում է նա:

Աբխազիայի Հեղկոմը հիմնվելով Բաթումի որոշման վրա, հռչակեց Աբխազիայի ԽՍՀ և այդ մասին 1921թ. մարտի 31-ին ուղիղգիր ուղարկեց Լենինին, Ստալինին, Չիչերինին և Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Լեռնային հանրապետության հեղկոմների նախագահներին[19]: Վրացիեղկոմը դրան արձագանքեց տևական դադարից հետո, ինչը կարելի է գնահատել որպես Բաթումի որոշումների կողմնակիցների և հակառակորդների միջև Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմում ներքին պայքարի ծավալման արդյունք: Վերջիններս, որոնք կուսպատմության մեջ հիշատակվում են որպես «ազգային ուկլոնիստներ», դեմ էին արտահայտվում Աբխազիայի, Աջարիայի և Հ.Օսիային ինքնուսվորություն տրամադրելուն[20]: Այդ հարցում նրանց պաշտպանում էին Վրաստանում դեռևս գոյություն ունեցող քաղաքական այլ կուսակցությունները: Այդ առիթով ձախ սոցիալիստ-ֆեդերալիստների «Տրիբունա» թերթը գրում էր. «Վրաստանում որևէ Հարավ-Օսյա գոյություն չունի, կան միայն վրացիների միջև ապրող օսեր: Վրացական օսերի ինքնավարությունն անհեթեթություն է...»[21]: Ժամանակակից վրացական պատմագրությունը վոսռաբանում է «ուկլոնիստներին», նրանց կոչելով. «...իրական վրաց հայրենասերներ, որոնք պայքարում էին Վրաստանի իրական անկախության համար, չէին զիջում ոչ մեծապետականներին, ոչ էլ՝ աբխազ և օս անջատողականներին»[22]:

Միայն 1921թ. մայիսի 14-ին Կ(բ)Կ Վրաստանի Կենտկոմը հատուկ որոշումով հաստատեց Բաթումի պայմանավորվածությունները, միաժամանակ նշելով, որ Աբխազիան մնում է ինքնուրույն, մինչև Խորհուրդների իր համագումարը, ուր պետք է վերջնական վճռվեր նրա ապրանքային դրության հարցը[23]: Ի կատարումն կուսակցական մարմնի քաղաքական որոշման Վրացիեղկոմը, դարձյալ երկար դադարից հետո (ինչը վկայում է բանավեճի շարունակումը), Աբխազիայի աշխատավորների 1-ին համագումարի նախաշեմին՝ մայիսի 21-ին հրապարակում է «Աբխազիայի ԽՍՀ-ի անկախության մասին» հռչակագիրը: Հռչակագիրը հրապարակելիս «աբխազ ընկերներից» Վրացիեղկոմի անդամները հավանաբար ստացել էին որոշակի երաշխիքներ: «Երբ մարտին մենք մտանք Սոխում՝ ասացինք. պետք է կարճ ժամանակահատված, Աբխազիայի և Վրաստանի աշխատավորների միջև ազգային հալածանքը վերացնելու համար և պետք է, որ մենք հայտարարենք անկախ հանրապետություն»[24], - նշում է Ն. Լակոբան: Նույն սգով է արտահայտվում Ե.Էշբան. «... նպատակ ունենալով վերացնել ազգային հալածանքը, որոշվեց գոնե

ժամանակավոր հայտարարել Խորհրդային Աբխազիայի անկախությունը»[25]:

Վրացիներկոմի հռչակագիրը ընթերցվեց Ս. Քավթարաձեի կողմից մայիսի 28-ին Աբխազիայի աշխատավորների 1-ն համագումարում, որը և ընդունվեց մեծ ոգևորությամբ: Պատասխան ելույթում Ն.Էշբան բոլոր հիմքերն ուներ նոր իշխանության վաղուսբանման համար ասելով. «Ամիսներով թախանձում էին Թիֆլիսում շինծու ինքնավարության մասին, սակայն և նույնիսկ սնամեջ ինքնավարության նրանք (խոսքը ներկայացուցչական մարմնի՝ Աբխազիայի Ժողովրդական Խորհուրդի մասին է-հեղ.) չէին կարող հասնել (մենշևիկների կառավարությունից-հեղ.)...Եկան բոլշևիկները և պստիկ Աբխազիան ունի իրական անկախություն»[26]: Այս առիթով 1921թ. օգոստոսի 12-ին կայացած Կովկասյան երկրամասային կոմսոմոլյուսկցության ժամանակ Գ.Օրջոնիկիձեն նշեց. «Երբ Աբխազիան պահանջեց անկախություն, մենք մատնանշեցինք Աբխազիայի կոմունիստներին, որ նման վիճակ պետության անկախությունն անհնար է, սակայն ի վերջո մենք համաձայնվեցինք: Մենք ասացինք. եթե աբխազ ժողովուրդը վրացիների նկատմամբ անվստահությունն է տածում...թող Աբխազիան լինի անկախ, թող նա բուժի մենշևիկների հասցրած վերքերը, սակայն հետագայում աբխազները իրենք կհամոզվեն խորհրդային հարևան Վրաստանի հետ սերտ միավորման անհրաժեշտության մեջ»[27]:

Աբխազիայի նոր իշխանավորները համտեսեցին իշխանության «հաճույքը», որը Ն.Լակոբան այսպես է նկարագրում. «Մենք սկզբից քաշվում էինք կոչել մեզ հանրապետության «նախագահներ», ժողկոմներ և այլն, սակայն անցնում է մեկ, երկու, երեք օր և ամաչկոտությունը վերանում է...»[28]: Այս նյութերանգը նկատել էին ժամանակակիցները և այն արտահայտել վրացական «Սոցիալիստ-ֆեդերալիստ» թերթի էջերում տեղ գտած «Աբխազիայի հարցը» հոդվածում. «Այժմ ստեղծվել է հարմար պահ արվարձաններում արտոնյալ մարդկանց համար: Մինչ Խորհրդային Վրաստանը զբաղված է ներքին կառուցապատմամբ, իրենք...ստեղծում են այնտեղ հանրապետություններ, քանի որ այժմ իշխանիկությունները մոդայիկ չեն...»[29]: Կարճ ժամանակ հետո՝ 1921թ. հուլիսի 5-ին Ստալինի մասնակցությամբ գումարված ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի պլենումում կայացվեց «ինքնավար հանրապետության ձևով Աբխազիայի և Վրաստանի միավորման ուղղությամբ կուսակցական աշխատանք ծավալելու մասին»[30] որոշում: Կովբյուրոյի ճնշման ներքո, հուլիսի 22-ին, Աբխազիայի ղեկավարությունը Բաթումում հրավիրեց Հեղկոմի և Աբխազիայի ՌԿ(բ)Կ Կազմբյուրոյի միացյալ նիստ, որին ներկա էր Կովբյուրոյի քարտուղար Հ.Նազարեթյանը: Բացատրական ելույթում նա պարզաբանեց, որ անկախության և ինքնավարության հարցերը կիրառական լուծման պարագայում որևէ սկզբունքային հակասություններ չունեն[31]:

Եվ իրոք՝ երբ իշխանությունը խստագույնս կենտրոնացվել էր կուսակցության ձեռքում՝ ինքնավարություն, թե խորհրդային «անկախություն» հասկացություններն այլևս կրում էին պայմանական բնույթ: Գտնվեց նաև մեծ ոգևորությամբ հռչակված «անկախությունն» ի չիք դարձնելու «տնտեսական հիմնավորում», որը և ներկայացվեց Աբխազիայի պատասխանատու աշխատակիցների՝ հուլիսի 23-ին հրավիրված խորհրդակցությանը: Ընդգծվեց, որ «խորհրդակցությունը Վրացիեղկոմի հռչակագիրը այսուհետև համարում է աբխազ ժողովրդին առավելագույն ինքնավար իրավունքներ լիովին երաշխավորող», որի «լիակատար անկախությունը... անիրականանալի է, քանի որ ոչ մի վոքրիկ խորհրդային հանրապետություն չի կարող գոյատևել անկախ»[32]: Հույս հայտնվեց, որ Աբխազիայի Խորհուրդների առաջիկա համագումարը իր համերաշխությունը կհայտնի Վրացիեղկոմի հռչակագրի սկզբունքներին՝ Վրաստանի հետ դաշնության և տնտեսական միասնականության հիմքերի վրա:

Վերադաս կուսակցական մարմիններն իրականում հաշվի չէին նստում Աբխազիայի անկախ կարգավիճակի հետ: 1921թ. հուլիսին կայացած Կովբյուրոյի պլենումը անհրաժեշտ գտավ. «...ճանաչել կովկասյան հանրապետությունների (Վրաստան, Ադրբեջան, Հայաստան) անկախության իրականացումը, պահպանելով գոյություն ունեցող լիակատար կուսակցական հարաբերություններն այդ երկրների կոմկուսի կենտկոմների և ՌԿԿ Կ-ի միջև...»[33]: Այս ատյանի նիստերին, Աբխազիայի, Դաղստանի և Լեռնային հանրապետության ներկայացուցիչները, ի տարբերություն երեք Այսրկովկասյան հանրապետությունների, մասնակցում էին խորհրդակցական ձայնի իրավունքով[34]: 1921թ. օգոստոսի 16-ին ստեղծված «Անդրկովկասի տնտեսական բյուրոյում» Աբխազիան, որպես առանձին միավոր, նույնպես չէր ներկայացված[35]: Այս ոլորվածքը հաստատում է Ստալինը 1921թ. սեպտեմբերի 1-ին ՀԿԳԿ - քարտուղար Ա. Ենուկիձեին գրած նամակում, «Աբխազիան հանդիսանում է անկախ Վրաստանի ինքնավար մաս, որի համար էլ ՌՍՖՍՀ-ում ինքնուրույն ներկայացուցիչներ չունի և պարտադիր չէ ունենա»[36]:

1921թ. հոկտեմբերի 15-ի Աբխազիայի Կազմբյուրոյի պլենումի և Հեղկոմի ընդլայնված համատեղ նիստում որոշվեց ձևակերպել Վրաստանի և Աբխազիայի կապը պաշտոնական պայմանագրով, որպես երկու միութենական հավասար հանրապետությունների[37]: Այսպիսով Աբխազիայի կոմունիստներն ինքնուրույն փոխեցին վերադաս Կովբյուրոյի որոշումը «ինքնավարացման» մասին: Այս անհնազանդության դրդապատճառները պարզ են դարձնում Աբխազիայի դեկավար գործիչների գայթակղությունը՝ անդամակցել Կովդաշնությանը, շրջանցելով Վրաստանը[38]: 1921թ. նոյեմբերի 14-ով թվագրված նամակում Ե.Էշբան դիմում է Կովկասյան բյուրո, խնդրելով հավանություն տալ Աբխազիայի անդամակցությանը

Կովդաշնությանը որպես չորրորդ հանրապետության[39]: Այդ գաղափարին կողմնակից էր նաև Ն.Լակոբան, ինչը նա խոստովանեց 1925թ. դեկտեմբերի 25-ին Վրաստանի կոմկուսի 4-րդ համագումարի ամբիոնից[40]: 1921թ. նոյեմբերի 1-ին վրաց-աբխազական հարաբերությունները քննարկվեցին Կովկասյան բյուրոյի նախագահության նիստում և որոշվեց 10 օրվա ժամկետում կազմել երկկողմ պայմանագրի նախագիծ: Այդ նպատակով ստեղծվեց հանձնաժողով՝ Բ.Լեգրանի նախագահությամբ: Բնական որ աբխազական ղեկավարությունը պնդում էր Կովդաշնությանն առանձին անդամակցելու հարցը, հանձնաժողովի գործունեությունը անարդյունք եղավ և նոյեմբերի 16-ին Կովկասյան բյուրոն կայացրեց պարտադրող որոշում. 1. Անկախ Աբխազիայի գոյությունը համարել աննպատակահարմար; 2. Առաջարկել ընկ. Էշբային ներկայացնել իր վերջնական եզրակացությունը Վրաստանի դաշնության կազմում՝ պայմանագրային հիմունքներով Աբխազիայի ընդգրկման մասին, կամ ՌՍՖՍՀ-ում՝ ինքնավար մարզի սկզբունքներով[41]: Առաջին հայացքից այս որոշումն նկատի էր առնում Խորհրդային Ռուսաստանին անդամակցելու աբխազ կոմունիստների սկզբնական ցանկությունը: Սակայն, երբ Աբխազիան արդեն հռչակվել էր անկախ, այդ առաջարկը նախատեսում էր իր կարգավիճակի էական իջեցում ե այստեղ առկա էր նրբամիտ հոգեբանական հաշվարկ: ՌՍՖՍՀ-ի կազմում Աբխազիան ստանում էր երկու աստիճան ցածր կարգավիճակ, քան Վրաստանի դաշնությունում: Իրական ընտրության բացակայության մասին է վկայում Աբխազիայի Կազմբյուրոն Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմին կազմակերպչական առումով ենթարկելու մասին Կովկասյան բյուրոյի նոյեմբերի 24-ի որոշման վաստը[42]:

1918-1921թթ. վրաց հասարակական կարծիքը ընտելացավ Աբխազիան Վրաստանի անբաժանելի մասը համարելու մտքին: «Անկախ Աբխազիան, որի բնակչության մեծ մասը կազմում են վրացիները՝ անընդունելի է և ստեղծված է լիովին այլ նպատակներով, որին տեղաբնիկ վրացիները երբեք չեն ընտելանա: Սակայն մինչև այս հարցի վերջնական լուծումը անհրաժեշտ է, որ Վրաստանի Հեղկոմը...նշանակի Աբխազիայում Ներկայացուցիչ, որը կպահպանի...վրացիների շահերը»[43], - գրում էր վրացական մամուլը: Վրաց կոմունիստները չէին կարող հաշվի չառնել այս տեսակետները, առավել ևս իրենցից ոմանք տոգորված էին այդ տրամադրություններով: Քանի որ Աբխազիան արդեն հայտարարված էր անկախ հանրապետություն, Վրաստանի «տարածքային ամբողջականությունը» պահպանելու նպատակով, վրաց ղեկավարների սթավ մտածող մասը չսակարկեց ինքնավարության պաշտոնական կարգավիճակի վերաբերյալ և համաձայնություն տվեց «պայմանագրային հանրապետությանը», որպես փոխզիջումային տարբերակի:

1921թ. դեկտեմբերի 16-ին Աբխազիայի և Վրաստանի լիազոր ներկայացուցիչները (Ն.Ակիրտավա, Ս.Կարտոզիա, Ս.Քավթարաձե) կնքեցին միութենական դաշնագիր, որի առաջին հոդվածն ամրագրում էր, որ վերոնշյալ հանրապետությունները կազմում են միմյանց հետ ռազմական, քաղաքական և տնտեսաֆինանսական դաշինք[44]: Տեղի ունեցավ Աբխազիայի ղեկավարության շրջադարձը դեպի Վրաստանի հետ միությունը: Այդ է վկայում 1922թ. հունվարին Վրաստանի կոմկուսի առաջին համագումարում Ե.Էշբայի ելույթը: «Մենք ոչ մի լոպե չէինք դադարում քարոզել ընդդեմ այսպիսի անկախությանը և քարոզչության արդյունքը ակնհայտ է»[45], – հայտարարեց նա:

Աբխազիայի Խորհուրդների առաջին համագումարը, որի անհրաժեշտության մասին խոսում էին խորհրդայնացման առաջին իսկ օրից, գումարվեց 1922թ. փետրվարի 12-17-ը: «Անդրկովկասի հանրապետությունների դաշնության մասին» զեկույցով հանդես եկավ Ն.Լակոբան. «...Խորհրդային իշխանության գաղափարի պահպանման նպատակով մանր ազգությունների շրջանակներում՝ ինչպես օրինակ աբխազականի, անհրաժեշտ էր մեկ լոպեով Աբխազիան հայտարարել անկախ հանրապետություն...»[46], - նշեց նա: Երբ համագումարում հրապարակվեցին Վրաստանի հետ միութենական դաշնագրի դրույթները պատվիրակների որոշ մասը բարձրաձայն բողոքեց: Ն.Լակոբան ստիպված էր արդարանալ և հակաճառել. «Աբխազիայի անկախությունը Վրաստանը չի խլում...»[47]: Ինչ անկախության մասին էր խոսքը, եթե, իր իսկ բառերով, այն հռչակված էր մեկ լոպեով: Պատվիրակներին վստահություն ներշնչելու նպատակով նա երաշխիքներ տվեց. «Եթե Վրաստանը սկսելու է խլել, մենք բողոքարկելու ենք հեղափոխության շտաբին՝ ՌԿԿ, ՀԿԿ, ընկ. Լենինին: Աբխազիայի աշխատավորների անկախությունը ոչ ոք չի կարողանա խլել, քանի դեռ գոյություն ունի խորհրդային իշխանությունը»[48]: Համագումարը ընդունեց որոշում՝ «Անդրկովկասի հանրապետությունների դաշնության և ԽՍՀ Աբխազիայի և ԽՍՀ Վրաստանի դաշնության մասին», որի երկրորդ կետով առաջարկվեց Աբխազիայի ԿԳԿ-ին մշակել նոր դաշնագիր այն հիմունքներով, ինչպիսին է Անդրկովկասի հանրապետությունների միութենական դաշնագիրը[49]: Չնայած համագումարը չհաստատեց 1921թ. դեկտեմբերի 16-ի դաշնագիրը, Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը 1922թ. փետրվարի 27-ին որոշեց Աբխազիային տրամադրել 3 տեղ հանրապետական ԿԳԿ-ում, միաժամանակ այն որակելով «ինքնավար հանրապետություն»[50]: Կուսակցավարությունը հավանություն տվեց 1922թ. մարտի 2-ին ընդունված Վրաստանի ԽՍՀ սահմանադրության առաջին հոդվածի հավելվածին, որտեղ Աբխազիան հայտարարվում էր «միավորված» Վրաստանի հետ, ի տարբերություն Աջարիայի և Հ. Օսիայի, որոնք մտնում են նրա կազմի մեջ[51]: Սակայն այդ տարբերությունը ուներ ձևական բնույթ: Դեռևս 1921թ.

սեպտեմբերի 10-ին Աբխազիայի Կազմբյուրոյի քարտուղար Ն.Սվանիձեն գրում էր Կովբյուրո. «Խորհրդային Աբխազիան իր տարածքով հավասար է Ռուսաստանի զավառին...Այնինչ ձևական նկատառումներով Աբխազիան հանդիսանում է ինքնուրույն հանրապետություն»[52]:

Աբխազիայի կարգավիճակը վերջնականորեն պետք է որոշվեր նրա սահմանադրությամբ. որի ստեղծման աշխատանքները սկսվեցին 1922թ: Նրա տեքստի ձևավորումը ձգձգվեց սուր հակամարտության պատճառով, որն առաջացավ Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի և ՌԿԿ Անդրերկրկոմի միջև՝ Անդրկովկասի հանրապետությունների դաշնության հարցի շուրջը: Վրաց «ուկլոնիստները», որոնք Կենտկոմում մեծամասնություն էին կազմում, տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունն պատճառով գտնում էին այդ դաշինքը ոչ նպատակահարմար: Դեկտեմբերի 10-ին Բաքվում կայացած Անդրկովկասի Խորհուրդների առաջին համագումարը հռչակեց ԱՍՖՍՀ. իսկ դեկտեմբերի 30-ին Մոսկվայում ստեղծվեց ԽՍՀՄ-ը, որի հիմնադիր անդամներն էին խորհրդային ազգային պետականության բարձրագույն աստիճան կրողները՝ միութենական հանրապետությունները, և որոնց հետևում էին նրանց կազմում գտնվողները՝ ինքնավար ԽՍՀ, ինքնավար մարզ և աշխատանքային կոմունա: Այդ համաձայնությանը հակասում էր Աբխազիայի կարգավիճակը: Ունենալով ԽՍՀ կարգավիճակ, նա հանդիսանում էր միաժամանակ և «միութենական», և՛ թե «միավորված» Վրաստանի հետ: Այսպիսի յուրահատուկ իրավիճակը չէր շփոթեցնում Աբխազիայի ղեկավարներին: Հիմք ունենալով 1922թ. մայիսին կայացած 2-րդ մարզային կուսկոնֆերանսում, Ն.Լակոբան ասաց. «...Մենք պետք է ասենք, որ այդ քաղաքական տեսակետը՝ անկախության հռչակումը և այլն, բարբաջանք է, նրանով հրապուրվել պետք չէր...մեզ պետք էր ցուցանակ, և մենք կախեցինք, սակայն խոնարհվել նրա առջև պետք չէ»[53]: ԽՍՀՄ-ի ստեղծումից հետո խառնաշփոթը վերջնականորեն չհաղթահարվեց: 1923թ. հունիսի 16-ին Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների 2-րդ համագումարում, Ծ.Էլիավան չկարողացավ ճիշտ գնահատել Աբխազիայի, Աջարիայի և Հարավային Օսիայի իրավական կարգավիճակը, վերջինս անվանելով հանրապետություն, այն դեպքում երբ այն ինքնավար մարզ էր[54]: Իսկ 2-րդ մարզային կուսկոնֆերանսում Աբխազիայի կարգավիճակի վերաբերյալ Ն.Լակոբան ասում էր. «Մենք ինքնիշխան պետություն ենք, ճիշտ է խորհրդային, բայց՝ անկախ»[55]: Ինչպես երևում է՝ հասկացությունների կատարյալ խառնաշփոթ: 1924թ. ԽՍՀՄ-ի առաջին սահմանադրության 15-րդ հոդվածում Աբխազիան հիշատակվում է որպես ինքնավար հանրապետություն[56]: Այս իրավիճակում Աբխազիայի սահմանադրության նախագիծ կազմողները չէին կարող կողմնորոշվել նրա կարգավիճակի ճիշտ գնահատման գործում: Բացասական ազդե-

ցությունն ունեցավ նաև Վրաստանում ազգային հարցի շուրջը ծավալված բանավեճը:

1923թ. մարտին կայացած Վրաստանի կոմկուսի 2-րդ համագումարի ամբիոնից հնչեցին Աբխազիայի տնտեսական շրջափակման կոչեր: Գրգռվածության պատճառը այն էր, որ Աբխազիայի պաշտոնական մարմինները չէին ընդունել որևէ փաստաթուղթ, որը իրավականորեն վավերացներ կապը Վրաստանի հետ՝[57]: Վրաստանում ստեղծված իրավիճակով խիստ դժգոհ էին Մոսկվայում: Այս կապակցությամբ, 1923թ. ապրիլին կայացած ՌԿԿ 12-րդ համագումարում ունեցած ելույթում Ստալինն ասաց. «Վերցնենք Վրաստանը: Այստեղ ստիպված է 30 % ոչ վրացական բնակչություն...Վրաց կոմունիստների որոշ մասում ծնվել է գաղափար՝ այնքան էլ հաշվի չնստել այդ մասնր ազգությունների հետ...Դա շովինիզմ է, վնասակար և վտանգավոր շովինիզմ, որովհետև նա կարող է փոքր վրացական հանրապետությունը վերածել գզվռտոցի ասպարեզի: Այնուամենայնիվ նա արդեն վերածել է իրեն գզվռտոցի ասպարեզի...»[58]: Այս կտրուկ գնահատականը բնորոշում է Վրաստանում ստեղծված իրավիճակը: Այդ պայմաններում հասկանալի է դառնում Աբխազիայի ղեկավարության զգուշավորությունը Վրաստանի հետ որևէ իրավական կապերի ստեղծման գործում: Գ.Օրջոնիկիձեն 1923թ. դեկտեմբերի 21-ին Անդրկովկասի Խորհուրդների 2-րդ համագումարում ստիպված էր հանգստացնել. «Աբխազիան հիմա ինքնուրույն հանրապետություն է... ով ուզում է դարձյալ վերածել նրան որևէ մեկի գաղութի, կստանա ձեռքերին»[59]:

1923թ. հունիսի 26-ին Աբխազիայի ԿԳԿ-ի նախագահությունը որոշեց որպես հիմք ընդունել Վրաստանի գործող սահմանադրությունը[60], իսկ 1925թ. ապրիլի 1-ին Աբխազիայի Խորհուրդների համագումարին ներկայացվեց առաջին սահմանադրության նախագիծը: 5-րդ հոդվածը հռչակում էր Աբխազիայի ԽՍՀ ինքնիշխան պետություն և դուրս գալու ազատ իրավունք էր վերապահում ԱՍՖՍՀ և ԽՍՀՄ-ից: Այս դրույթը խիստ հակասում էր վերը նշված կառույցների սահմանադրություններին: Հետազոտողների միջև կան տարաձայնություններ ԽՍՀ Աբխազիայի 1925թ. Սահմանադրության օրինական լինելու մասին: Հիմք ընդունելով «3-րդ Համաաբխազական Խորհուրդների համագումարի տեղեկագիրը», ուր հայտնվում է Վրաստանի ԽՍՀ և ԱՍՖՍՀ-ի սահմանադրությունների հետ համաձայնեցման նպատակով համագումարին ներկայացված նախագծի վերամշակման որոշման մասին[61], մի շարք վրաց պատմաբաններ (Մ.Լորդքիփանիձե, Ա.Սուրգուլաձե, Է.Խոշտուարիա-Բրոսսե, Լ.Թոդիձե, Գ.Գոգսաձե և այլք) պնդում են, որ այսպես կոչված «1925թ. Սահմանադրությունը» մնաց որպես նախագիծ[62]: Աբխազ պատմաբան Բ.Սագարիան և վրաց գիտնականներ Դ.Գամախուարիան, Բ.Գոգիան հաստատում են Սահմանադրության ընդունման փաստը 3-

յոյ համագումարում[63]: Սակայն դրա տեքստը չէր հրատարակվել և իրավական կարգավիճակ չի ստացել[64]: 1925թ. սեպտեմբերի 6-ին ՀԿ(բ)Կ Անդրկովկասյան մարմինը անհրաժեշտ համարեց սահմանադրորեն ձևակերպել հարաբերությունները Վրաստանի և Աբխազիայի միջև, միաժամանակ վերանայելով ԽՍՀ Աբխազիայի Սահմանադրությունը[65]: Արդեն սեպտեմբերի 11-ին այս որոշումը քննարկեց Աբխազիայի մարզկոմի նախագահությունը և որոշեց ստեղծել հանձնաժողով Ն.Լակոբայի գլխավորությամբ: Հոկտեմբերի 27-ին ուղղումներով նախագիծը հաստատվեց Վրաստանի կոմկուսի Կենտկոմի Քարտուղարության կողմից, որը հանձնարարեց Աբխազիայի ԿԳԿ-ն ընդունել այն սահմանված կարգով: 1925թ. դեկտեմբերի 2-ին ելույթ ունենալով Վրաստանի կոմկուսի 4-դ համագումարում, Ն.Լակոբան խոստովանեց սահմանադրության ընդունման հարցում 1925թ. ապրիլին թույլ տված «վրիպումը», անվանակոչելով այն «հիմարություն»[66]: Թե ինչու նա ընտրեց ինքնաքննադատության ճանապարհը գուցե բացատրում են Վրաստանի Կենտկոմի քարտուղար Մ.Կախիանու խոսքերը, որոնք մեջբերում է Ն.Լակոբան. «Աբխազիան իրենից ներկայացնում է բազմազգ հանրապետություն, ընդորում այս հանրապետության առանձին մասերը լավ չեն ընտելացել միմյանց: Աբխազիայի իրական անկախության և Վրաստանից հեռանալու մասին հարցադրումը կբերի Աբխազիայի փլուզմանը ինչպես խաղաքարտերից կառուցած տնակի»[67]: Նույն համագումարում Օրջոնիկիձեն Աբխազիան անվանելով ինքնավար, միաժամանակ և ակնարկեց նրա նպատակահարմարությունը աբխազների փոքրաթիվ լինելու պատճառաբանությամբ[68]: Այդ հարցին անդրադառնում է Ֆ.Մախարաձեն՝ «Սուխումում ՎրացԿԳԿ-ի ստաշրջանի կենտրոնական հարցը» հոդվածում («Սովետսկայա Աբխազիա», 1926թ. 16 հունիսի), որտեղ նա գրում է. «...Հիմնական աբխազ ազգությունը ներկա պարագայում կազմում է փոքրամասնություն երկրում: Մեզ կարող են հարցնել. ինչու՞ է պետք Աբխազական հանրապետությունը: Լավ չի՞ լինի այն վերացնել միանգամայն»[69]: Սահմանադրական փոխհարաբերությունների վերջնական հստակեցման նպատակով 1926թ. հունիսի 11-ն Սուխումում գումարվեց Վրաստանի ԿԳԿ-ի ստաշրջանը, որը հաստատեց Վրաստանի ԽՍՀ նոր Սահմանադրությունը: Նրա 5-դ գլուխը նվիրված էր Աբխազիային, որը ինչպես ինքնավար Աջարիան, այդուհետ մտնում էր Վրաստանի կազմի մեջ: Վրաստանի ԿԳԿ-ի ստաշրջանի հանձնարարությամբ Աբխազիայի ԿԳԿ վերամշակեց 1925թ. Սահմանադրության նախագիծը և իր ստաշրջանին՝ 1926 թ. հոկտեմբերի 27-ին, հաստատեց նոր տեքստը, որը հրապարակվեց: Սահմանադրության վերջնական հաստատումը տեղի ունեցավ 1927թ. մարտի 7-ին Աբխազիայի Խորհուրդների 4-դ համագումարում[70]:

1920-ական թթ. վերջերին ԽՍՀՄ-ում արդեն ձևավորվել էր ազգային պետական կառույցների հիերարխիա, որտեղ «պայմանագրային հանրապետություն» հասկացությունը առանձնացված էր: Քաղաքական այսպիսի հարկադրական պահանջ դարձավ իմն բերելու Վրաստանի և Աբխազիայի իրավական հարաբերությունները, այն համաձայնեցնելով ձևավորված իրականությանը և ԽՍՀՄ-ում իրականացվող պետական շինարարության քաղաքականությանը: Դեռևս Վրաստանի կոմկուսի 6-րդ համագումարում 1929թ. հուլիսի 4-ին Ն. Լուկոբան հայտարարեց. «Աբխազիայի և Վրաստանի փոխհարաբերությունների հարցը ձևակերպված է այնպես, որ Աբխազիան ստիպված կլինի որոշակի փոփոխություն կատարել իր Սահմանադրությունում...»[71]: Նույն ժամանակ Աբխազիայի Ժողկոմխորհրդում կազմված տեղեկանքում նշված է «որ 1921թ. դեկտեմբերի 16-ի դաշնագիրը ...կորցրել է իրական նշանակությունը...կարող է դիտվել միայն որպես պայմանագիր ԽՍՀ Վրաստանին ԽՍՀ Աբխազիայի միավորման, որ պայմանագրային ԽՍՀ Աբխազիա անվանումը չունի իրական բովանդակություն»[72]: 1930թ. ապրիլին Աբխազիայի ԿԳԿ-ի ճնշումի ներքո որոշում կայացրեց վերացնել «պայմանագրային հանրապետություն» հասկացությունը սահմանադրությունից, վերանվանելով այն «ինքնավար հանրապետություն» անվանակոչումով: 1931թ. փետրվարի 11-ին Աբխազիայի Խորհուրդների 6-րդ համագումարը, իսկ նույն ամսվա 19-ին՝ Վրաստանի Խորհուրդների 6-րդ համագումարը հաստատեցին այդ որոշումը[73]:

Եթե ընդունենք միայն ձևական իրավական կողմը, անշուշտ Աբխազիայի կարգավիճակի փոփոխումը կարելի է դիտել որպես նվազեցում: Սակայն նա «ինքնավար» դիտվում էր դեռևս 1921թ-ից, մյուս կողմից, սակայն, հանրապետության կարգափոխությունը չփոխեց նրա իշխանավորների իրական դերն ու լիազորությունները: Աբխազիայի ինքնավար հանրապետությունը, շնորհիվ նրա ԿԳԿ-ի նախագահ Նեստոր Լուկոբայի հեղինակությանը և մտերմությանը Ստալինին, իրականում օգտվում էր միութենական հանրապետության կարգավիճակին բնորոշ «բարիքներից»[74]: Միաժամանակ Աբխազիան չէր համապատասխանում նաև մի շարք այլ պահանջների (տարածքը, բնակչության թիվը և այլն) միութենական հանրապետության իրական կարգավիճակ ստանալու համար: Այսպիսով 1931թ. տեսական քաշքշուկից հետո, Աբխազիայի համար գտնվեց կարգավիճակի մի տարբերակ, որը կարծես պետք է վերջակետ դներ այդ հարցում:

BENIAMIN MAILYAN

DEFINITION OF THE ABKHAZIA'S STATUS BY THE SOVIET STATEHOOD (1921-1931)

The study of the condition of Abkhazia in soviet state period have an importance in the context of the modern relationships between georgians and abkhazians. After sovietization of Georgia. befor the formation of the USSR, communist leaders of Soviet Abkhazia seek for the status of independence. which formally was given from central communist bodies. During the formation the federation of south Caucasis republics, Abkhazia was included Soviet Republic of Georgia based on an alliance agreement. Higher state and party bodies of the USSR regarded Abkhazia as autonomy region, but it was called agreement republic, such concessions were made, because the great part of abkhaz nationality didn't want to be under the administrative patronage of Georgia. The status of agreement republic of Abkhazia in 1922-1930 had the same formal character, as the independence in 1921. In 1931 Abkhazia was transformed into an autonomy republic in Georgia SSR as the USSR hadn't the analogy of agreement republic.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Д.Стуруа, Сепаратистское движение в Абхазии в 60-е и 70-е годы нашего столетия, Тб., 1995, с. 59, նաև տես՝ А.Ментешашвили, Оккупация и фактическая аннексия Грузии, Тб., 1990.
2. Տես՝ Г.Дзидзария, "Киараз" (Об Абхазской революционной крестьянской дружине 1917-1921 гг.), Сух., 1981; նույնի Роль Советов и "Киараза" в истории революционной борьбы в Абхазии 1917-1921 гг., Сух., 1971.
3. А.Ментешашвили, Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии (1917-1921) Тб., 1987, с. 189.
4. Укрепление Советской власти в Абхазии (1921-1925). Сборник док. и мат. Составитель А.О.Тулумджян, Сух., 1957, с. 14-15.
5. Образование СССР, сборник док., М.,1972, с.172.
6. Революционные комитеты Абхазии в борьбе за установление и упрочение Советской власти (февраль 1921-февраль 1922), сб. док., Сух., 1961, с. 27.
7. Революционные комитеты Грузии, сб. док. и мат., Сух., 1963, с. 78.
8. Б.Сагария, Национально-государственное строительство в Абхазии (1921-1931 гг.), Сух., 1979, с. 25.
9. Б.Сагария, Образование и укрепление советской национальной государственности в Абхазии (1921-1938 гг.), Сух. 1981, с. 41-42.
10. Б.Сагария, Образование и укрепление.., с.44.
11. А.Ментешашвили, Октябрьская революция..., с. 189.
12. Г.К.Орджоникидзе, Статьи и речи, М., 1956, т.1, с.199-200.
13. А.Ментешашвили, Октябрьская революция..., с. 189.
14. Укрепление Советской власти в Абхазии (1921-1925), с. 27.

15. По поводу искажения грузино-абхазских взаимоотношений, Тб., 1991, с. 85.
16. Н.А.Лакоба, Статьи и речи, сост. А.О.Тулумджян, Сух., 1987, с.176.
17. В.И.Ленин, Полное собрание сочинений, т. 45, с. 360.
18. Там же, т. 45, с. 359-360.
19. История Абхазской АССР 1917-1937, Сух., 1983, с. 101.
20. Очерки истории Коммунистической партии Грузии, Тб., 1971, с. 428.
21. "Трибуна"(27.09.1921), մեջբ. ըստ А.Ментешашвили, Октябрьская революция..., с.198.
22. Д.Стуруа, նշվ. աշխ, էջ 58.
23. Քաղաքական կուսակցությունների արխիվ (Թբիլիսի), ֆ. 14, ց. 1, գ. 11, բ. 22.
24. Н.А.Лакоба, նշվ. աշխ, էջ.34.
25. Съезды Советов Абхазии (1922-1923 гг.), сборник док. и мат., Сух.,1959, с. 92, док. N 29.
26. Укрепление Советской власти в Абхазии (1921-1925), с. 44-45.
27. Г.К.Орджоникидзе, նշվ. աշխ, էջ 200-201.
28. Н.А.Лакоба, նշվ. աշխ, էջ 176.
29. Д.Гамахариа, Б.Гогиа, Абхазия-историческая область Грузии с древнейших времен до 30-х годов 20 века, Тб., 1997, с. 477, док. N 267.
30. А.Ментешашвили, Октябрьская революция..., с. 192.
31. Б.Сагария, Образование и укрепление.., с. 47-48; Г.П.Лежава, Между Грузией и Россией: исторические корни и современные факторы абхазо-грузинского конфликта XIX — XX веках, М., 1997, с. 101.
32. Б.Сагария, Образование и укрепление.., с. 48-49.
33. Քաղաքական կուսակցությունների արխիվ (ք. Թբիլիսի), ֆ. 14, ց. 1, գ. 37, բ. 180, մեջբ. ըստ թերթի "Свободная Грузия", N 115(28.06.1991).
34. "Свободная Грузия", N 115(28.06.1991).
35. Там же.
36. История Абхазии, Гудаута 1993, с. 329; А.Ментешашвили, Октябрьская революция..., с.192; В.А.Шнирельман, Война памяти: мифы, идентичность и политика в Закавказье, М., 2003, с. 267.
37. Б.Сагария, Образование и укрепление.., с.50
38. История Абхазской АССР.., с.105, նաև տես՝ Б.Сагария, Образование и укрепление.., с. 51.
39. Դ.Գամսխարիա, Վրաց-աբխազական հարաբերությունների պատմությունից, Թբ., 1991, (վրաց.լեզ.), էջ 125, նաև տես՝ "Свободная Грузия", N 115(28.06.1991), նաև История Абхазии.., с.330.
40. Н.А.Лакоба, նշվ. աշխ, էջ 177.
41. Б.Сагария, Образование и укрепление.., с.51, նաև տես՝ История Абхазии.., с.330.
42. Б.Сагария, Образование и укрепление.., с.51.
43. "Социалист-Федералисти", (23.07.1921), մեջբ. ըստ Д.Гамахариа, Б.Гогиа, Абхазия-историческая..., с. 476, док. N 265.
44. По поводу искажения..., с. 90.
45. Б.Сагария, Образование и укрепление.., с.56.

46. Там же, с. 54.
47. Там же, с. 58-59.
48. Տես՝ "Международное право", N 4, 1999, с. 253-266.
49. Съезды Советов Советских Социалистических Республик (1917-1922 гг.), сборник док., М., 1960,т. 2, с. 461.
50. Քաղաքական կուսակցությունների արխիվ (ք. Թբիլիսի), ֆ. 14, ց. 1, գ. 192, p. 215.
51. По поводу искажения..., с. 92.
52. Դ.Դամախարիա, Վրաց-սբխազական.., էջ 118, նաև տես՝ "Свободная Грузия", N 115 (28.06.1991).
53. Դ.Դամախարիա, Վրաց-սբխազական.., էջ 118.
54. Б.Сагария, Образование и укрепление.., с. 131.
55. Դ.Դամախարիա, Վրաց-աբխազական.., էջ 113.
56. История советской Конституции (1917-1956), М., 1957, с. 463.
57. Б.Сагария, Образование и укрепление.., с. 56.
58. И.В.Сталин, Сочинения, т. 5, с. 249-250.
59. Б.Сагария, Образование и укрепление.., с.59.
60. Там же, с. 121.
61. Съезды Советов союзных и автономных советских социалистических республик Закавказья, сборник док. (1923-1937), т. 6, М., 1964, с. 673.
62. По поводу искажения..., с. 93, նաև տես՝Исторические и политико-правовые аспекты конфликта в Абхазии, Тб., 1995, с. 54, նաև Этнополитические конфликты в Закавказье, США, Мериленд, 1997, с. 133.
63. Б.Сагария, Образование и укрепление... с. 121-123, նաև տես՝ Д.Гамахариа, Б.Гогиа, նշվ. աշխ. էջ 122, նաև История Абхазской АССР ... с. 196-197.
64. По поводу искажения.., с. 93 նաև Д.Гамахариа, Б.Гогиа, նշվ. աշխ. էջ 123.
65. История Абхазской АССР.., с. 197, նաև Д.Гамахариа, Б.Гогиа, նշվ. աշխ. էջ 123.
66. Н.А.Лакоба, նշվ. աշխ. էջ 177-178.
67 Там же.
68 Б.Сагария, Образование и укрепление.., с. 10.
69 Там же.
70 История Абхазской АССР., с. 199-200.
71 Н.А.Лакоба, նշվ. աշխ. էջ 277.
72 История Абхазской АССР.., с. 250.
73 Там же, с. 338.
74 С.З.Лакоба, Очерки политической истории Абхазии, Сух., 1990, с. 118; В.А.Шнирельман, նշվ. աշխ. էջ 267: Վերջինս, հղելով Ստանիսլավ Լակոբայի աշխատությունը, համոզված գրում է, թե. «Желая закрепить это положение, в последние годы жизни [Нестор] Лакоба неоднократно ставил перед Сталиным вопрос о включении Абхазской АССР в состав РСФСР» (նույն տեղում, էջ 267). Այդ պնդումը, սակայն, չի հիմնավորված վավերագրորեն և Ս. Լակոբայի աշխատության մեջ ներկայացված է հետագայում գրառված հուշերի հիման վրա (տես С.З.Лакоба, Очерки ..., էջ 123):